**Արձանագրություն N 6**
**Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ դեղերի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«23» «Հունվար» 2019թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Մ.Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Մ.Հարությունյան, Հ.Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

### *1. Ներկայացված տեխնիկական բնութագրի չփկման առաջարկի մասին*

---

**(Մ.Մխիթարյան)**

Ընդունել ի գիտություն, որ 19-րդ չափաժանի մասով՝ վալպրոյաթթու կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ, «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի: Մասնավորապես, վերջինս ներկայացրել է «Դեպաքրոն» (ծագման երկիրը Բանգլադեշ) դեղը, որը հայտերի գրանցման օրը 08.01.19թ. գրանցված չի եղել դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր): Նման պարագայում մասնակցի կողմից պետք է ներկայացվի Կառավարության 02.05.13թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2.1 կետով պահանջվող տեղեկատվությունը (նշված պահանջը սահմանվել է նաև հրավերով): Սակայն 19-րդ չափաբաժնի համար «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից պահանջվող տեղեկատվությունը չի ներկայացվել է, որը դիտարկվել է տեխնիկան բնութագրին անհամապատասխանություն:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետը՝ որոշվեց 24.01.19թ. «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին ծանուցել և առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ մինչև սույն թվականի հունվարի 25-ը ժամը 18:00-ն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------------------- Մ.Հարությունյան

---------------------- Հ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Մնացականյան